

891.99

2-26



50 891.99

2-26

ար.

ԳՈՒՐԳԻՆ ՀՇՅԿՈՒՆԻ

6 NOV 2011



4.

1001
2193

ՀՀՀ

8

ՀՀՀ

ՍԱՄԵԼ ՀՈՎԻԿ

Գ-ՕԷ Մ



2023

06 JUN 2013

37971

ՍԱՐԳԻՍ ԵՒ ԵՂԻՍԱԲԷԹ

ՀԱՅԿՈՒՆԻՆԵՐԻ

ԱՆՄՈՌԱՑ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՆԻՐՈՒՄ Է

ՆՐԱՆՑ

ԽՈՐԱՊԷՍ ՅԱՐԳՈՂ

ՀՐԱՏԱՐԱԿԻԸ



ԹԻՖԼԻՍ

Տպ. «ԿՈՒԼՏՈՒՐԱ» Բարձու. փողոց 14.

1912.

ԵՐԿՈՒ ԽՕՍԻՔ

Լոյս ընծայելով ներկայ գրքոյկը՝ հեղինակը պարտք է համարում յայանել, որ այս պօէման (հովևականք) գրելու առիթ և հիմնաքար է հանգիսացել նրա հանգուցեալ հօր Սարգիս Հայկունու գրի առած և հրատարակած «Հութութիկ» ժողովրդական վէպիկը Խարբերդի բարբառով:

Ձեռքի տակ ունենալով ժողովրդական այգպիսի մի գեղեցիկ նիւթ — հեղինակը վարել է այնպէս, ինչպէս կը վարէր արևստագէտը այն սիրուն մարմարիօն քարի հետ, որից նա կամենում է սիրոյ յուշարձանը կանգնեցնել:

Իսկ թէ ի՞նչ չափով է յաջողւել նրան հասնել իր նպատակին, այդ արգէն կարող է որոշել ամեն մի գիտակ ընթերցող:

ՍԵՄԻԼ ՀՈՎԻԿ

I

Մալաթիայում, այն հեռաւոր
Լեռնոտ երկրում, առանձին,
Ապրում էր մի ծեր, ալեւոր
Խեղճ ու կրքակ հողածին:
Վաղ օրերից նա զրկւել էր
Իր կողակցից սիրելի.
Անմըխիթար և ալեհեր
Նըրա կեանքում՝ հայելի,
Գծւում են սե՛, ամենամութ
Թշւառ օրեր կարիքի,
Բաղդը ծերին դարանամուտ —
Նա ենթակայ չարիքի:
Ամենայն օր լուսաբացին
Շտապում էր մութ անտառ
Եւ այնտեղից փայտ ու կացին
Շալակն առած, անդադար,

Տընքտընքալով, կամաց-կամաց
 Դէպի քաղաք պիտ գնար,
 Փայտը ծախէր, նըրա դիմաց,
 Քանի կոպէկ ստանար:
 Բընակւում էր հին խըրճիթում.
 Թոնրին՝ մի մեծ խաչերկաթ.
 Եւ իր միակ այծն էր կթում—
 Փոքրիկ թասում մի քիչ կաթ:
 Գարեհացի բլլիթներով,
 Թոնրից հանած տաք ու նոր,
 Հայրը, երեք աղջիկներով,
 Գոհանում էր ամեն օր:

Կանչեց մի օր հէզ ձերունին
 Չաւակներին լեռնաբոյս,
 Խօսեց նա իր ջահէլներին
 Դողդոջ ձայնով մտայոյզ.

«Էլ ի՞նչ ունէք դուք սեփական,
 Իմ բալիկներ սիրասուն,
 Միայն խղճուկ, հայրենական
 Մի կաղլիկ այծ անասուն:
 Նայէք ձեր շուրջ, դէպի լեռներ,
 Դէպի սարեր կանաչոտ,
 Տեսէք այնտեղ անթիւ գառներ,
 Ոչխարների մի մեծ հօտ:
 Խայտում են թարմ կանաչներում,
 Ոսոոսում են համարձակ,
 Նըրանց գոմից գօլըս են բերում
 Դէպի արօտ լայնարձակ:
 Իսկ ձեր միակ այծին կաղլիկ,
 Գիշերներով օրն ի բուն,
 Փակել էք մութ, խարխուլ, նեղլիկ,
 Կեղտոտ գոմում հաւարուն»:
 --Էլ գորդ չունենք, պատասխանեց
 Իր հայրիկին այևոր,
 Չարսիրտ աղջիկն ամենամեծ, --
 Որ սար ելնենք ամեն օր,
 Անպէտք այծիդ հետ միասին
 Մըթնացնենք սարերում,
 Միշտ մըտածենք նըրա մասին
 Այս մեր ծաղիկ օրերում:

Մենք էլ գիտենք՝ դու մեզ համար
 Բերել ես զարդ գեղեցիկ,
 Նոր կօշիկներ կամ անհամար
 Ասեղ, ուլունք թափանցիկ:

Երկրորդ օրը կանչեց միջնակ
 Իր աղջրկան, ծերունին,
 Խնդրեց նըրան, որ նա մենակ
 Արօտ տանի այծիկին:
 Սա էլ իր մեծ քրրոջ նըման
 Ընդգրիմացաւ ծերունուն.
 «Դարաս է կտրել, քա վնյ, ամման,
 Որ քո քոսոտ կենդանուն
 Գոմից հանեմ ու մշտական
 Եյնեմ սարեր քարքարոտ,
 Ջահէլ կեանքում իմ կուսական
 Մընամ հացի միշտ կարօտ»:

Անցան օրեր, առաքինի
 Ծերը կանչեց փոքրիկին,
 Գիտէր, որ իր խօսքը կանի
 Բարի, քնքոյշ այդ հոգին:
 «Ոոցւած է խոր սիրտըս անճար,
 Օհ, իմ գառնակ մինուճար,
 Քոյրերիդ պէս մի անարգիր,
 Այլ իմ խօսքս դու յարգիր:
 Նայիր հապա, ինչ ալիքներ,
 Ինչ կնճիռներ ճակատիս,
 Չը վրդովես դու ալեհեր,
 Ծերուկ մարդուն, այ որդիս»:
 — Լսիր հայրիկ, ծընող անգին,
 Դատրիկդ քեզ հընազանդ՝
 Յիշում է խնր ու թանկագին
 Սիրուն խօսքերն հընաւանդ.
 «Պատւիր ծերին, որ ծերանաս,
 Ծերի պատիւն իմանաս».
 Ուստի և նա իր ծերուկին,
 Քաղցրիկ ծընող հարազատ,
 Չի խընայիլ իր իսկ հոգին,
 Ջահէլ կեանքը իր ազատ.
 Պատրաստ է հօր հըրամանին՝
 Ջուրը ընկնել կամովին,

Որ քոյրերս հասկանային
 Խօսքերն անմիտ հիմնովին...
 «Ծլինս, ծաղկինս, իմ սիրունիկ,
 Դու իմ գարնան աղունիկ,
 Ե՛կ, համբուրեմ այդ աչիկներ,
 Երկու վճիտ լճակներ:
 Գրնա՛, գոմից այծիկին տար
 Դէպի սարեր կամ անտառ,
 Դու ծառի տակ հանգստացի,
 Թող այծիկն էլ արածի»:
 —Անգին հայրիկ, դու էլ հապա
 Գաիր հովւի մի գգակ,
 Մի զոյգ տըրեխ, բրդէ կապա,
 Կաղնուց երկար մի մահակ.
 Եւ մի սրինգ քաղցրահնչիւն,
 Որ նւագեմ՝ սար ու ձոր
 Լսել անուշ մի կարկաչիւն,
 Մի սիրուն երգ քաղցրածոր:

Գրնաց շուտով ու ծերունին
 Առաւ, բերեց մի գգակ,
 Մի զոյգ տըրեխ, կապան էլ հին,
 Երկար մահակ կոնատուկ:
 Տւեց դստեր, որ նա հագնի,
 Դառնայ հովւիկ լեռնական,
 Իր ծերուկ հօր ձեռք պագնի,
 Հայրն էլ՝ սիրուն աղջրկան
 Ճամփա դրնի այծիկի հետ,
 Տանից վերև, քիչ հեռու,
 Որ նա բռնի նեղ արահետ,
 Հասնի մինչև մի առու:
 «Ձէ, չեմ տանի», սասց իր հօր
 Սամէլ դստրիկ վճռական:
 —Չը խոստացար առաջին օր,
 Ասաց ծերը աղջրկան,—
 Լսել դու քո խեղճ հայրիկիդ,
 Չը վրդովել իմ հոգին,
 Այժմ ինչո՞ւ ընկար կողքիդ,
 Դուրս չես տանում այծիկին:
 «Ների՛ր ծնող, մի՛ նեղածար,
 Քո աղջիկը մեն-մենակ,
 Առանց սըրինգ ինչպէ՛ս գընար
 Խուլ սարերը անբընակ»:

Քաղաք գնաց ծերը կրկին,
 Գտաւ սրբինդ գեղեցիկ,
 Բերեց Սամէլ նոր հովւիկին,
 Իր աղջըկան երգեցիկ:
 Նա էլ առաւ ու կոնակին
 Աղով լցւած մի տոպրակ,
 Գարեհացեր կոնատակին,
 Ճամփա ընկաւ դէպ պուրակ:
 Նըրա առջից այծը կերթար,
 Վերից սիրուն իր Մարջան,
 Կանչում էր նա. «Դէ, առաջ տար,
 Այս նեղ ճամփով, շընիկ ջան»:
 Ծունը նըրան հասկանում էր,
 Գիտէր լեզուն մարդկային,
 Դէպի վերև սըլանում էր,
 Գանում ուղին լեռնային:
 Քանի անգամ այծը կորչում,
 Յետ էր փախչում դէպի տուն.
 Սամէլ Հովիկ, սար ու ձորում,
 Դէ, թափառիր դու անտուն:
 Աչքերի մէջ կըրակ ու պէծ,
 Վազում էր նա ու կանչում,
 Ճարը կարաւ՝ այծին կապեց
 Ծառի բընից կանաչում:

Նստած այնտեղ մաամուր,
 Արտասուում էր, հառաչում,
 Նայում շուրջը, իր չորս բոլոր,
 Տունը յիշում, քոյրերին,
 Հովւի կեանքին դեռ անսովոր,
 Տանջում սարի նոր փէրին:
 Ահա յիշեց, որ տոպրակում
 Պահած ունի ծեծած աղ,
 Լցրեց ափում և պուրակում
 Այծը լիզում, կաղէ-կաղ,
 Պոկում կանաչ, գընում առաջ,
 Հետևելով Հովիկին.
 Հովիկն էլ մերթ լալահառաչ
 Կանգ էր առնում ու կրկին
 Առաջ անցնում սարերն ի վեր,
 Հօրն էր յիշում, իր խոստում—
 Սրտապնդւած և անվհեփ
 Բնաւ ճամբին չէր նստում—
 Ու երգեր էր նա ասում...

Առաւ սըրինգ, դըրեց բերնին,
 Մեղմիկ լսեց մի նըլագ...
 Հնչեց մորմոք կոյս պատանին.
 «Կեանքի ծովում մի նաւակ
 Զոն է դարձել փրփրադէզ
 Ալիքներին կատաղած,
 Նաւակի մէջ սիրունատես
 Կոյս աղջիկը նըլագած,
 Սարսափահար ու հերարձակ
 Փարւել է պինդ ծերուկին,
 Ո՛հ, ծերունին անհամարձակ
 Դեռ պահում է անմեկին...
 Ահեղածուփ ծովը է մնչում
 Փոթորկայոյզ, չարագոյժ.
 Սրտաճմլիկ կոյսն է կանչում,
 Թոյլ շուրթերովն իր քնքոյշ:
 Գոռ ալիքներ սարի նըման,
 Մըռընչում են մոլեգին,
 Աղջիկը գեղ ու աննման
 Գոչում է «Հայր» լալագին:
 Ամպերը մոլթ, կուտակ-կուտակ,
 Եւ ալիքներ ողջ կամար...
 Նաւակը ցած կամարի տակ,
 Շպառուում է անհամար:

Մօտ է վայրկեան... ալիքներում
 Ինչպէս չնչին մի տաշեղ,
 Ա՛հ, ցնցում է ու երերում...
 Փարոս ձգտում նա անշեղ:
 Մեղմ նըլագում Սամէլ Հովիկ,
 Երգ էր ասում քաղցրաձայն.
 Սարի փէրիք, չը խըռովիք,
 Զեր վառ օրեր խաւրեցան:
 Զընաշխարհիկ կոյս-պատանի,
 Մի ողջ աշխարհ բովանդակ,
 Սիրո՛ւն, համեստ ու նազանի
 Հովիւ աղջիկ, մի հրեշտակ
 Ելել է դուրս մութ ամպերից,
 Իջել է ցած սարերում,
 Մեզ անծանօթ մի աշխարհից
 Նոր կեանք, արև նա բերում:

1001
 2193



Անցան ժամեր, վերջալոյսի
 Մի գունազեղ ցոլացում...
 Վառ աչիկներ հովիւ-կոյսի
 Անհնուն էին թափանցում:
 Սամէլ Հովիկ տանից հեռու,
 Ամբողջ մի օր բոլորած,
 Փնտուում էր նա, չկայ առու,
 Ճամփին վաղճւց մոլորած...
 Օրը մթնեց, ամբողջ երկիր
 Խորասուզեց խաւարում:
 «Կաղլի'կ իմ այծ, այստեղ պառկիր,
 Իսկ դո՛ւ, շնիկ, խոտերում,
 Ննջենք այսօր մաքուր օդում,
 Մարի լանջին քարքարոտ,
 Պայծառ աստղեր երկնուց խնդում,
 Ցոլում են սէր ու կարօտ:
 Երկինքը մեզ լինի վերմակ
 Ու կոշտ քարեր՝ բարձի տեղ.
 Թուխպեր չըկան, միայն ճերմակ
 Փոքրիկ ամսլիկ կայ այնտեղ»...

Մորփէոսի անուշ գրկում
 Ննջեց Սամէլ պատանի.
 Զեփիւնն օրօր տաղ էր երգում,
 Շոյում կոյսին գեղանի:
 Հեռում այծիկ մուշ-մսուշ անում,
 Մարջան շնիկ դեռ արթուն...
 Երազի մէջ, խորունկ քընում,
 Տեսնում է նա ծեր մարդուն՝
 Կանգնած է իր գլխավերև
 Եւ, հայեացքով սիրալիր,
 Տալիս է մի քաղցրիկ բարև,
 Ասում՝ «Սամէլ, դու քայլիր
 Դէպի Բինգեօլ ծաղկոտ լեռներ,
 Ինչքան գետեր հազար ակ,
 Կանաչներում անթիւ գառներ,
 Բիւր աղբիւրներ սառնորակ»:
 Յանկարծ լաւեց իրարանցում,
 Բարձր հաջոց Մարջանի,
 Շունը վազում ու կաղկանձում,
 Գայլ է կանգնած ամենի:
 Թըռաւ Հովիկ, առաւ մահակ,
 Ուղիղ վագեց դէպի գայլ,
 Հեսն էլ Մարջան, ինչպէս պահակ,
 Գայլը հեռո՛ւ հազար քայլ:

Լուսադիմին, առաւօտեան,
 Խաւարն է խօլ փարատուում
 Եւ արշալոյս մի վաղորդեան
 Փայլում սարի յետևում:
 Ճամփա ելաւ Սամէլ Հովիկ
 Ու աղ տւեց այծիկին.
 Իսկ իր սիրուն Մարջան սևիկ
 Միշտ անբաժան իր կողքին:
 Գընում էր վեր դէպի կատար,
 Դէպի բարձունք սարերի,
 Քայլում հաստատ նա անդադար՝
 Սիրուն եղնիկ թփերի—

Ժայռի տակին վճիտ աղբիւր
 Դուրս է ժայթքում սառնորակ,
 Ժայռին տալիս քնքոյշ համբոյր,
 Շուրթ-կաթիլներ բոլորակ:
 Աղբիւրի մօտ, ժայռի տակին,
 Հանեց շորերն համարձակ,
 Միայն շապիկ նըրա հագին,
 Ոտաբոբիկ, հերարձակ,
 Չքնաղ Հովիկ, կոյս-գեղանի,
 Նա լուսեղէն արարած,
 Նազիկ քայլքով և հոլանի,
 Մարմինը մերկ պարուրած,
 Աղբիւրի մէջ, թըրթըռալով,
 Ջըրին տւեց անուշ բոյր,
 Զուրը զգոյշ փաղաքշելով,
 Կոյսից առաւ մի համբոյր:
 Փարւած են ջինջ մարմար կրճքին
 Զրի բիւրեղ կաթիլներ...
 Ու ճողփունից ցայտում կրկին,
 Խըլում են ջերմ համբոյրներ:

Սարից այն կողմ, արևմուտքում,
 Կայ լեռնադաշտ խոտաւէտ,
 Ուր ծլում են, յաւէտ ծաղկում՝
 Թարմ ծաղիկներ հոտաւէտ:
 Կանաչներում կոյս վառվռուն
 Հեռւից աեսաւ մի մեծ հօտ.
 Խայտաբրդէտ գառներ սիրուն
 Խմբւում են շուտ իրար մօտ:
 Առաւ սըրինգ, հնչեց կրկին
 Մեղմիկ նը ագ քաղցրածայն,
 Երգեր անկ ու սրտագին
 Դէպի հեռն սփռեցան:
 Ողջ բնութիւն հրապուրւած
 Աչքը յառել Հովիկին,
 Իսկ պատանին ոգևորւած,
 Տալիս էր շունչ սըրնգին.
 «Եկէք ինձ մօտ, գառներ սիրուն,
 Դնէք, ուլիկներ անհամար,
 Անցէք ձորով, մտէք առուն,
 Բերել եմ աղ ձեզ համար»:
 Եւ ոչխարներ շարան-շարան,
 Գերւած գեղ-գեղ նւագից,
 Կազմած անծայր մի կարաւան,
 Անցան ձորի գետակից:

Ժայռերի մէջ, կոծաններով,
 Քարափներից մահագոյժ,
 Թռան անվախ, մեծ խմբերով,
 Ոգի առած ու աշխոյժ:
 Հասան շուտով չքնաղ կոյսին,
 Նոր հովիկին փառահեղ,
 Հանգիստ ու հեզ, լնւռ, միասին,
 Բոլորեցան խելայեղ:

Հնչում էր դեռ սիրատուշոր
 Երգը բոցոտ հարւածով,
 Շարժում լեռներ ժայռոտ ու չոր,
 Յուզում էր վիշտ — արնածով:
 «Ելէք, գառներ, մի նոր երկիր,
 Սիրուն աշխարհ եղեմի.
 Իսկ դնւ, սըրինգ, անուշ երգի՛ր,
 Անցնենք ճամփան մենք դէմի»:
 Հօտը ամբողջ, դիւթւած ուժգին,
 Ելաւ ստքի միաբան
 Եւ ուշադիր աննւշ երգին,
 Անցաւ դէմի նոր ճամփան:

Շղթայաձև, անմահ, ծաղկոտ,
 Բինգեօլ լեռներ ձիւնապատ
 Իջնում են ցած ու ծիծաղկոտ
 Ժպտում են սէր խանդակաթ:
 Եւ ծաղիկներ սիրաբողբոջ
 Բուրում են սէր քաղցրաշունչ,
 Զեփիւռը մեղմ սուլում անկոչ,
 Փարւում է նսւրբ զովաշունչ:
 Շւշալսով, քարանձաւից —
 Փոքրիկ մանուկ նորածին,
 Մուրաս գետակ խիստ ծարաւից
 Փախչում է դուրս առանձին:
 Համբոյր տալով ծնւած վայրին
 Շրթունքներով սառնորակ,
 Փարւում, գրկում ծաղիկներին,
 Սըլանում է խոր ձորակ:
 Ամեն մի բար շնչում է սէր—
 Մաքսւր, անբիծ եթերում.
 Սիրոյ մէջ է ողջ աիեգեր
 Նոր կեանքի յոյս օրորում...

Բինգեօլ սարի բարձունքներին,
 Բընութեան մէջ կուսական,
 Հասաւ անվախ, մատաղ փէրին,
 Սամէլ Հովիկ լեռնական:
 Ահա չքնաղ՝ մի տեսարան,
 Բացւում անծայր մի եզեմ,
 Ուր ծաղիկներ հազար բերան,
 Ողջունելով խնդաղէմ,
 Կանչում են ձեզ աշիկներով,
 Նայում անյագ ու կարօտ,
 Հիւսւած իրար վառ գոյներով—
 Կազմում փայլուն մի նարօտ:
 Հալեց կոյսի մատաղ հոգին
 Ծաղիկներից երփներանգ,
 Ուրախ, գլարթ և խնդաղին,
 Մոռցած վշտեր ու տանջանք,
 Թռաւ ինչպէս կայտառ եղնիկ
 Եզեմի մէջ գըրաւիչ,
 Ուր թփերում անմահ թռչնիկ
 Հնչում է երգ հրմայիչ:
 Ժողվեց նարգէս, բազմատեսակ
 Կազմեց փնջեր դալարուն
 Եւ փնջերից հիւսեց պսակ,
 Զուգեց իրան վառվուռն:

Անցան օրեր և նա երկանր
 Ապրեց չքնաղ վայրերում...
 Սակայն կաղլիկ այծը տկար
 Ոտքի վրայ երեբում,
 Ընկնում էր ցած հիւանդ, անուժ,
 Ամբողջ մարմնով բորոտած,
 Իսկ պատանին կանչում անուշ.
 «Հանգիստ, այծի՛կ փայփայած.
 Քեզ կը տանեմ աղբիւրի մօտ—
 Պաղ ջրքի մէջ լողանաս,
 Որ լոյսի հետ այս առաւօտ
 Ոտքի ելնես, թարմանաս»:

Եղեմական բինգեօլ ջրում—
 Ամեն մի մարդ հիւանդոտ
 Բուժւում է սառ այս աղբիւրում,
 Աշխարհ գալիս եռանդոտ:
 Զուրը ունի մեծ զօրութիւն՝
 Կենդանանար, հմայիչ,
 Կիանքի ամեն հիւանդութիւն,
 Անթիւ ցաւեր քայքայիչ:

Կորչում են շուա, անհետանում
 Ալիքներում նոր մտած—
 Գետը նրբանց խորն է տանում
 Հոսանքի հետ սըրընթաց:

Առաւօտեան Սամէլ Հովիկ
 Առաւ սրբինգ քաղցրաձայն,
 Երգեր անմահ, գեփիւռ, հովիկ
 Դէպի հեռու սփռեցան:
 Հօտն էլ մէկտեղ թռաւ ոտքի,
 Հասաւ կոյսին գեղեցիկ,
 Վաղուց տխուր, կարօտ երգի,
 Նոր երգերի գեղեցիկ:
 Այծերի մէջ կարմիր, փամփուիկ,
 Վազում էր ժիր, եռանդոտ—
 Այծը նախկին սևուկ, կաղլիկ,
 Բորոտ, անուժ, հիւանդոտ:
 Կենդանացած ոգի առել
 Բիւզեօլ ջրից հրմայիչ,
 Մի տարւայ ուր, այծիկ դառել,
 Սարի այծիկ գրբաւիչ:
 Եւ եղջիւրներ ծառի նման
 Ուղղահայեաց բարձրացել,
 Ծուել են յետ ու սննման
 Յօգաւորւած կորացել:

«Ելէք, գառներ, եղեմական
 Բինգեօլ ջրում լողացէք.
 Բինգեօլ ջրում անմահական
 Նոր կեանք առէք, թարմացէք»:
 Եւ ոչխարներ, յափշտակւած
 Սամէլ Հովկի նւագից,
 Թափւեցին ներս ու խրոնրւած
 Ելան կենաց ակունքից:
 Սպիտակած ձիւնի նման
 Այն սևաբուրդ ոչխարներ,
 Հագել են նուրբ, թաւշանման
 Բուրդ-մետաքսէ զիպակներ:

Երգում է կոյս Սամէլ Հովկի.
 Արար աշխարհ հիացել
 Եւ օդի մէջ սարի հովիկ
 Քարացել է—մնացել:
 Բինգեօլ լեռներ ծիծաղախիա,
 Վայրի շուշան, մանուշակ,
 Զգաստութեան մայր Անահիտ
 Նայում են լճու, անուշակ...



Հուսաշաղին հանդարտ, կամանց,
 Սաւարն է լուռ փարատում.
 Եւ խաւարից սարի դիմաց
 Աղօտ մի լոյս եթերում
 Նուրբ թևերով ցօլում քնքոյշ,
 Գրկում է խոր մթութիւն,
 Պայծառանում շողշող, զգոյշ,
 Կարմրատակում բընութիւն:
 Եւ բոցեղէն ճառագայթներ,
 Բինգեօլ սարի թիկունքից,
 Քանդած մթին որոգայթներ,
 Թուշում են հուր ակունքից:
 Լերան ետև ոսկէ արև
 Բինգեօլն ի վեր մազլցում,
 Տալիս է ջերմ, քաղցրիկ բարև,
 Շող համբոյրներ արձակում:

Թարմ օգի մէջ, արշալոյսին,
 Անուշ քնից կազդուրւած,
 Պաշարում էր հովիկ կոյսին
 Մի հին թախիժ նորոգւած:
 Քանի, քանի օրեր անցան—
 Նա միայնակ, լեռներում,
 Առանց ընկեր, ախոյր, անձայն,
 Ման էր գալիս, թափառում:
 Ինչի՞ն էր պէտք անմահ եղեմ,
 Մարգարտաշար աղբիւրակ,
 Նարգէս, շուշան ու խնդադէմ
 Ծաղկոտ լեռներ, սէգ բիւրակ:
 Սիրով լեցուն բոյր, ջինջ եթեր
 Ծնչում էր նսշ, անուշիկ,
 Ուղղում կոյսին սիրոյ նետեր,
 Խոցում սիրտը քնքուշիկ:
 Օ, անձուկ էր նրբա համար,
 Նա քայլում էր վիրաւոր,
 Ինչ ճնշող էր երկնակամար,
 Հորիզոնը հեռաւոր:
 Խեղդում էր նա անօդ, պապակ
 Ու անսահման բոցավառ...
 Սիրտը կրճքում նեղ, ամրափակ,
 Հրդեհում էր սիրավառ:

Ահա հեռից, սեին տալով,
 Բարձունքներին, ճաշայ դէմ,
 Մօտենում էր, ոստոտալով,
 Մի ուրիշ հօտ դէմ առ դէմ:
 Նշմարւում էր հօտի ետքից
 Կարիճ հովիւ վառվռուն,
 Սամէլ Հովկին հասակակից,
 Զահէլ տղայ, մի գարնէն:
 Արևահար, սէգ, թիկնաւէտ—
 Խոր հայեացքով կրրակոտ
 Դիտում էր նա երանաւէտ
 Զքնաղ կոյսին՝ ամաչկոտ:
 Գերւած նրբան ամբողջ հոգով,
 Հալչում էր նա ուշաթափ
 Արև-կոյսի մի հայեացքով,
 Բոյր ժըպիտով սիրատապ:
 Բայց թէ արդեօք ցրնորամիտ
 Այս երազ չէ խաբուսիկ.
 Բայց աչքերըդ, տղայամիտ,
 Նայիր, փայլուն այդ կուսիկ
 Քեզ պէս ջահէլ դարիբ չորան,
 Հովիւ է նա՝ քաջ տղայ.
 Ինչո՞ւ շուտով մոռցար ճամփան,
 Այ դու անխելք երեխայ:

էլ մի կանգնիր, դէ, ուշքի եկ,
 Սարի ջիւան անւանի,
 Հարցուր, մի տես, ո՞վ է նորեկ
 Այդ հովւիկը պատանի:
 «Բարե զարիբ, խիզախ հովւիկ,
 Ո՞ւր ես եկել տարագիր.
 Հայրենի տան ցաւն ու կարի՞ք
 Բերաւ քեզի այս երկիր:
 Բայց ասա՛ ինձ, չէ՞ս վախենում,
 Հէ՛յ միամիտ լեռնական,
 Ման ես գալիս այս եղեմում,
 Իմ աշխարհում սիրական:
 Դու չէ՞ս լսել՝ Բինգեօլ սարի
 Միակ տէրն է Հութութիկ.
 Նա շրջում է ամեն տարի,
 Ձեռքում բռնած պարսատիկ,
 Իր երկիրը՝ լեռներ ու ձոր,
 Խոր անտառներ ծառաշատ,
 Ուր աճում են վայրի խնձոր,
 Մորի, կաղին ու փշատ:
 Երէ, գազան նրա անից
 Փակւել են մութ բներում,
 Սարսափահար դաժան մահից,
 Դուրս չեն գալիս — թափառում:

Օձն իր պորտով, դուշն իր թևով,
 Ո՛չ էլ մի մարդ հողածին,
 Սիրտ չի արել իմ աշխարհով
 Գնալ գանել սիրածին»:
 — Լսիր անխելք, վայրի չոբան,
 Դու, մեծամիտ Հութութիկ,
 Բնց է, ազատ սարի ճամփան,
 Գրպանըդ դիր պարսատիկ:
 Մամէլ Հովիկ մինչև այսօր
 Ձի սարսափել ոչ մէկից,
 Ման է՝ գալիս գիշեր ու գօր
 Առանց ընկեր սրտակից:
 Նա գալիս է մի աշխարհից,
 Ուր որ մարդիկ սիրո՞վ, հաշտ,
 Երկիւղ չունեն անից-մահից,
 Ման են գալիս սար ու դաշտ:
 Երկիրը իր գաւակներին
 Արդարութեամբ, հաւասար
 Պարգևում է չարն ու բարին,
 Մեծ բարեքներ բլբլբ, հազար:
 Սակայն մարդիկ գազաններից
 Նենգ, գիշատիչ, արիւնոռչա—
 Խըլում են միշտ իրար ձեռից,
 Ինչէ՞ս ազահ ու անկուշա:

Եղբայրական վրեժ հողին
 Հանգել է դարչ սրտերում,
 Մարդիկ այսօր, ճի՛, անագին
 Դեերին են սատարում:

Մատաղ կրրծքից կարկաչահոս
 Ծորում էր մի աղբիւրակ
 Ու մտազբաղ, վերից անխօս,
 Դիտում էր վե՛հ, սէգ Բիւրակ:
 Իսկ Հուլիսի թոյլ, զինաթափ,
 Քար էր կտրել ամաչկոտ,
 Քարերն էլ պինդ, մինչ ուշաթափ,
 Խնդում էին ծիծաղկոտ:
 Ամօթահար իր վարմունքից,
 Իր խօսքերից փոքրոզի,
 Գերլած կոյսի կամար ունքից,
 Բոց աչքերից շեշտակի,
 Ձղջում էր նա ու խղճահար
 Փոթորկում էր իր հողին...
 Այժմ էլ նրբան, ան, նետահար
 Խոցոտում էր անհողին—
 Ձեռքը խրրած նրբա կրրծքում,
 Սիրան էր քաշում անուելի,
 Սուր մագիլներ նրբան գրկում,
 Հպում էին սիրելի...

«Մի բարկանար, Մամէլ Հովիկ,
 Քեզ հետ արի մի կատակ.
 Դո՛ւ էլ ինձ պէս, սարի հովիկ,
 Դի՛ր մահակըդ կոնատակ:
 Ես էլ, անա, առանց ընկեր
 Պըտտում եմ միշտ մոլար,
 Սիրտըս տխնւր, արնոտ վէրքեր,
 Տաղ եմ կանչում միալար:
 Գէ եկ, եղբայր, այս լեռներում
 Ուրախ օրեր վայելիր.
 Տես թէ ինչպէս կեանքըն ետում,
 Ժպտում է մեզ սիրալիր:
 Արի, ուխտենք հէնց այս պահուն,
 Ընկեր լինենք անբաժան,
 Կեանքի փըշոտ ճամփին՝ անհուն
 Մէրը լինի մեր նըշան:
 Եւ ոչխարներ թող միասին
 Մի հօտի մէջ խառնըլին.
 Մենք երկուսով նըրանց մասին
 Հոգսեր քաշենք կամովին»:
 — Պարզ է հողիդ, ո՛վ Հուլիսիկ,
 Սիրտըդ անկեղծ չորանի.
 Ամեն խօսքըդ՝ ոսկու հատիկ,
 Մարդուն խելքից կը հանի:

Ես սիրում եմ ազնիւ մարդուն,
 Որ օտարին սրտակիր,
 Իր գործին էլ հմուտ, արթուն —
 Խոյս է տալիս վրտանգից:
 Ապրենք ինչպէս սերտ, հարազատ
 Երկու եղբայր անխրոով.
 Մեր տեղը մեծ, մենք էլ ազատ,
 Շրջենք այս լայն աշխարհով:

Ու խառնեցին հօտերն իրար,
 Երկու հօտեր դանազան.
 Վրկայ եղաւ երկիր արար
 Նրբանց ուխտին սրբազան:

Սարի գլխով հօտն էր շարժւում,
 Գնում էր հեղ, խայտալով.
 Անթիւ ոչխար, ծայրը հեռւում,
 Հովիւներն էլ խնդալով
 Խօսում էին քաղցրիկ, անուշ,
 Կանչում արձակ, լայնաթոր,
 Շնչում էին օդը անուշ,
 Դիտում սարը Փալանթոր:
 Նրբանց դէմքը՝ վեհ ու զւարթ,
 Նրբանց հոգին՝ գարնան ցօղ...

Ու թըշերին մի մի հատ վարդ,
 Փայլուն աչքեր ժպտացող
 Շողում էին ունքերի տակ,
 Թռչում հեռու, անսահման,
 Ուր արեգը կամարի տակ
 Մօտենում է իր անկման:

Ժայռի տակից աղբիւրը սառ
 Վըշվըշում է, կարկաչում.
 Կաղմում գետակ ու սարէսար
 Թաւալում է կանաչում:
 Դայլայլիկներ, կայտառ խոխոջ
 Գըրաւում են անցորդին.
 Եւ ըզմայլած, սիրաբողբոջ
 Մօտ է գալիս լեռնորդին —
 Ծրծում անյագ, անուշաբոյր
 Նեկտար ջուրը, արբենում,
 Նընջում է լուռ, հեզահամբոյր,
 Խորունկ քընով արբենում:

Եղբայրացած երկու հովւիկ
 Այցի ելան աղբիւրին.
 Զուրն էլ զիւթող իր կորովիք
 Լի ներշնչեց մեն հիւրին:

Հացի նստան որսի մտով,
 Ծախապատիկ, չոր տափին
 Ու խորոված միսն երկուսով
 Վայելեցին ջրբափին:
 Նըրանց սուփրին ամեն բարիք,
 Ճաշիկ համեղ, հովևական...
 Ահա անթիւ յուշկապարիկ,
 Անտես մի-մի ուրևակոն,
 Պար բռնեցին աներևոյթ,
 Կըլոր մի պար խըմբովին,
 Բըրքըջացին անձայն, անփոյթ,
 Զըւարճացած լիովին,
 Պաշարեցին Սամէլ Հովկին—
 Մերկացնելու անխընայ.
 Ծըշընջացին. «Անմահ, սվ կին
 Հանգիստ, դու մի վախենայ.
 Թող Հութութիկ օր չը տեսնի,
 Միշտ տանջըլի սիրավառ,
 Թէ կըրարի՞՞ է, թող որ հասնի
 Ու ձեռք բերի իր աւար»:
 Իսկ Հութութիկ այեկոծւած
 Շառաչում էր իր հոգում,
 Ուշքն ու միտքը սիրով տարւած,
 Զերմանում էր և խոկում...

Բազկատարած ուղեց փարի,
 Կըրծքին սեղմի Հովկին,
 Հուր շուրթերով ջերմ համբուրի,
 Մի պաշ խըլի թանկագին.
 Ու սթափեց... ամարային
 Ճանճանչներում շողշողակ
 Զըքացան նսրբբ, եթերային
 Տեսիլքները յաջողակ:

«Սամէլ Հովիկ, երթամ մեր տուն—
 Վաղան հացի մեղ համար.
 Իսկ դու հօտին հսկիւր արթուն.
 Զար գազաններ անհամար
 Թափառում են շըջակայքում,
 Որսի ելնում շատ զգոյշ
 Երբ աստղիկներ նոր-նոր ծագում,
 Պըլպըլում են նսրբբ, քնքոյշ:
 Եւ գընաց նա դէպի հիւզակ,
 Իէպի իր տուն հայրենի,
 Ուր թըփերում գողտրիկ սոխակ,
 Աղանիներ վայրենի,
 Ծերուկ մօր հեա գուրս են գալիս,
 Դիմաւորում Հութութիկին,
 Լեցուն սրտով բարև տալիս,
 Ծըլըլում են խնդագին:

— Ախ, ո՞ւր եկար, ազիզ բալաս,
 Շանը թողիր հօտի մօտ.
 Մեր օրը սև, չուլ ու փալաս
 Մօրըդ հագին, հիւրի մօտ
 Ամաչում է թէ որ դուրս գայ,
 Մի ջուր բերի ուզողին.
 Այս ի՞նչ գուլում կրրակն ընկայ,
 Ախ, ի՞նչ հող տամ իմ գլխին...
 Ինչո՞ւ եկար, չէ՞ ամեն օր
 Հաց են բերում քեզ համար.
 Դէ, կասէիր, եթէ մի նոր
 Բան ես ուզում, սյ յիմար:
 «Ահա մայրիկ, էլի նորից
 Անէծքներ ես դու թափում.
 Ինչ որ մընաց իմ խեղճ հօրից —
 Փուճ տըղի պէս չեմ լափում,
 Բաժին հանում գազաններին,
 Քանդում հօրրս յիշատակ.
 Ե՛ս էլ գիտեմ չարն ու բարին,
 Կեանքիս առողջ նըպատակ:
 Հօտի համար բոլորովին
 Մի մըտածիր իզուր տեղ,
 Գառնուկները ժիր, խմբովին
 Թըռչկոտում են միատեղ:

Նըրանց մօտ է իմ նոր ընկեր.
 Սամէլ Հովիկ քաջ հովիւ,
 Ծաղիկ հասակ, սև-սև ունքեր,
 Չինար բոյով մի հովիւ:
 Երգեց նա ինձ իր արևով՝
 Եղբօր նըման, իմ մօտին,
 Հաւատարիմ մընալ, սիրով
 Մըտիկ անել մեր հօտին:
 Նըրա հօտը մեծ է իմնից —
 Էն պակասը մի. հազար.
 Երբ էլ ուզի բաժնել ինձնից —
 Պէտք է կիսենք հաւասար:
 Էլ մի կանգնիր, մի ձըւածեղ
 Ձեռաց եփիր, թէ որ կայ
 Մաքուր կարագ, կամ հալած եղ,
 Դէ շճա, ճամփից ես ընկայ»:

Ելաւ մայրը կրրակ վառեց,
 Իւղը դըրեց, որ հալի.
 Խոր թասի մէջ ձուն էլ հարեց,
 Մեղըը, յետոյ, հիւթալի
 Քըսեց հացին, եղձըլի հետ
 Տըւեց նըրան, որ շուտով
 Բռնի ճամփան, նեղ արահետ,
 Որ չը մընայ սև-մութով:

Եւ Հութութիկ վերադարձաւ,
 Գրնաց հասաւ ընկերին.
 Ժայռի կրրծքում մի քարանձաւ—
 Նրբա առջև հուր-փէրին
 Մակաղել էր հօտը ամբողջ,
 Ինքն էլ թիկնած սալ քարի—
 Ծուրջը կանաչ, ծաղիկ, բողբոջ
 Հայեացքներով հեզ, բարի
 Ձեն յագենում ու անրսպառ
 Ծըշնջում են փըսփըսուկ.
 Թիթեռներն էլ կազմած մի պար,
 Վերջին պարը մահասուգ,
 Թըռչկոտում են ծաղկէ ծաղիկ,
 Ծծում բոյրը թունաւոր,
 Թիթեռնիկներ, մի դանդաղիք,
 Մահագանգը ահաւոր
 Հընչելու է՝ կենսաթրթիւ
 Բոյլ հոգեակներ մարելու,
 Հաց ու խնդում, բողբոջ, խնդիր
 Մահւան հըրով վառելու:
 Ծծէք կեանքը անդառնալի,
 Վայելեցէք ժամ առ ժամ.
 Մինչ ձեր վերջին կայծը փայլի,
 Երաւար հնչի մահաժամ:

Իսկ դ՛նք, հովւիկ, այրւած սրտեր,
 Լացէք, խամրէք սիրահար,
 Ձեր տապ սիրուց բացւած վարդեր
 Թող որ թռչնին ցրտահար:
 Էլ մի, իգուր, խաբէք իրար,
 Հերիք տանջւիք սրտաբեկ,
 Ծալ-ծալ դիզւած սէրը վարար
 Ձեր կրրծքերից դ՛ուրս թափէք:

Ահա մի օր՝ մինչ պաասնիք
 Տարւած էին իրարով,
 Անտես արւած ողջ կենդանիք
 Անցան հեռու ձորերով:
 Մտան ուղին օձապըստոյա—
 Գըլխակորոյս, մոլորուն.
 Ու գընացին անբան, անփոյթ,
 Ծուռ ճամփէքով ոլորուն:
 Ուշքի եկան երկու ջահէլ
 Սիրող սրտեր ամօթխած...
 Պէտք էր փընտուել, պէտք էր նայել,
 Գըտնել հօտը ցած փախած:
 Վազվըզում էր խեղճ Հութութիկ,
 Վայ էր տալիս, հառաչում.
 «Ամման մէրիկ, անուշ տատիկ»,
 Յած էր թռչում ու կանչում.

«Ա՛խ, կոտորւէք փուճ, անիծած
 Կենդանիներ դուք անբան,
 Մեծ քարերից գլորւէք ցած,
 Սև-մուխ բըռնի ձեր ճամփանս:
 Ո՞ւր էք կորել, է՛յ, անիրաւ
 Անասուններ դուք տըխմար.
 Ինչքան վազեմ, հոգիս ելաւ,
 Հերիք տանջւեմ ձեզ համար»:

Սամէլ Հովիկ գըթաց նըրան.
 Իր մօտ կանչեց Հաթուկին.
 Կանգնեց բարձրը ժայռի վըրան,
 Մի շունչ տըւեց սըրընգին.
 «Եկէք ինձ մօտ, հէ՛յ բալիկներ,
 Իմ գառնուկներ սիրասուն.
 Դո՛ւք էլ կայտառ իմ չալիկներ,
 Չար ուլիկներ ձեռնասուն:
 Ես ձեզ համար երգ եմ ասում,
 Անուշ երգեր ձեր սիրած.
 Լըսէ՛ք ինձի՝ գայլ է վազում,
 Ատամները սուր սըրած,
 Ման է գալիս նա օրերով,
 Հոտ է առել ոչխարի,
 Պըտըտում է քաղցած փորով
 Մուխ ձորերը աշխարհի»:

Եւ ոչխարներ լեղապատառ
 Դուրս թափւեցին ձորերից,
 Երգի ձայնով ժիր, անդադար,
 Վեր բարձրացան սարերից:
 Վայրի ոչխար, քարի այծեր
 Փախչում էին մինչ անհետ,
 Կճղակներից կարծես կայծեր
 Թըռչում էին զարկի հետ:
 Թըրթըռացին ալեծածան
 Զիլ նըւագներ քաղցրածոր
 Ու հողմի հետ վիշտ լալաձայն
 Տարածւեցին սար ու ձոր:
 Արտասուեցին ժայռեր ու քար,
 Հեծկըլտում էր ամբողջ հօտ.
 Վայրի ոչխար, այծ խելագար
 Թափւում էին Հովիկ մօտ:
 Թառամում էր ալ վարդ ծաղիկ,
 Հութուկին էր անշէջ հուր.
 Իսկ դիցունհին անմահն Աստղիկ
 Ժպտում էր լուռ, ոսկեհուռ:



Սըլանում են ժամերն անհետ,
 Օրն է շըրջում գլխիվայր.
 Եւ լուսինը աստղերի հետ,
 Սարի գլխից գառիվայր,
 Ցած է ընկնում անդրլեռնեայ
 Անդունդի մէջ գըրաւիչ,
 Ուր վաստակած քիչ թարմանայ
 Գըրոջ կըրծքին նա թովիչ:
 Բայց անխ, անյայտ, խորհըրդաւոր
 Մի սլարթի ուժ մեզ անտես,
 Դուքս է մըղում մինչ բախտաւոր
 Գոյր արեւին նոր հանդէս:
 Եւ միշտ գունատ լուսին ծպտուն,
 Մունջ արեգակ մայրածին,
 Նայում են խէթ կոյսին ժպտուն—
 Փարւած կըքով սիրածին:

Մինչդեռ արեւ, լուսին ծարաւ
 Սողում էին թոյլ, պապակ,
 Հուժուժիկն էլ սիրածարաւ
 Մըտորում էր մի փափագ:

Շարան-շարան, իրար ետքից,
 Անցնում էին ձիգ օրեր.
 Հաւած կաթ-կաթ ծանըր վերքից—
 Նըրա վիշտը շատ խոր էր:
 Ի՞նչ էր ցաւը նըրա հոգու.
 Հուր էր վառել իր սրտում.
 Ո՞վ էր խոցել խոր, անարկու,
 Ո՞ւմ էր նա միշտ աղօթում:
 Մէկը միայն հասկանում էր—
 Գիտէր վիշտըն ընկերի.
 Եւ նա մնջիկ, ան, քամում էր,
 Կորիւնն արած մի գերի:

Այսպէս մի օր մինչ նա դժգոյն—
 Տուն էր գնում մոյրւած,
 Որդեկորոյս մայրիկ դշխոյն
 Դըռան շէմքին երևաց:
 «Վայ քո արեւին մատաղ լինիմ ես,
 Այդ ի՞նչ ես գառել իմ սիրուն թըռչնակ.
 Հերիք է որքան, սհ, սիրտըս քամես,
 Հարագատ ձեռքով մորթես անգանակ:
 Չէ որ տարիներ այս կըրծքի վըրայ
 Հանգչել ես խաղանդ, փթթել ծաղկի պէս.
 Գոնէ այս անգամ իմ խօսքըս արա,
 Մայրիկըդ մեռնի, թէ որ ինձ խաբես.—

Քո հոգուդ խորքից մի վիշտ, մի կսկիծ
 Քաղում է թըշիդ վարդերը դալար
 Եւ այդ մետադէ քաջառողջ կըրծքի
 Արիւնն է կաթում մէրքերի պալար:
 Քանի-քանի օր, անքուն գիշերներ,
 Թափել եմ գաղտնի արցունքի հեղեղ.
 Բալիկիս համար սիրտըս անվեհեր
 Ընկել է վաղուց մի սարսափ անեղ»:
 — Մայրիկ իմ անգին, կեանքիս դու պատճառ,
 Օհ, վիշտս քեզնից ինչո՞ւ եմ պահում,
 Մարմնւմ եմ արգէն, քամոււմ շարաշար,
 Մարմնիս վըրայով պաղ ջուր է սահում,
 Կարմիր հրգեհից դառնում է շոգի,
 Գրկում է մէկից, խանձում բովանդակ.
 Սիրտս լախանում, ուզում է ճաքի,
 Փշրի պոզպատէ իմ կըրծքի վանդակ...
 Սիրոյ գիցունհին բոցավառ կըրակ
 Նետի հարւածով մեխեց իմ սրտում.
 Նայեց դիւթալի, խոյս տւեց արագ,
 Շըջեց գլխիվայր մի ծով անարտում:
 Յուշիկ քայլածքով երագ տեսիլքում
 Նա իմ ականջին այն ինչ էր ասաց.
 «Սամէլ Հովիկին ինչո՞ւ չես գրկում,
 Վարդաշող գոհար, աղջիկ է հասած»...

«Օհ, մի հառաչիր այդպէս յուսահատ.
 Թոյլերը միայն կասեն ու կուլան.
 Իսկ քեզ պէս կտրիճ ամեն մի անհատ
 Հըզօր պիտ լինի, հըպարտ մի ասլան:
 Ամեն ցաւի դէմ կայ դեզ ու դարման,
 Ամեն մի շարիք ծնում է բարիք.
 Դէ, բարձր պահի, գլուխըդ կեռման,
 Թող որ քեզ չընկճի և ոչ մի կարիք:
 Ինձ համար միայն զարմանք է այսօր,
 Որ Սամէլ Հովիկ աղջիկ է շարմաղ...
 Նախախնամութեան ուժի դէմ անգօր—
 Տըկար շուրթերով ինչ ասեմ, աւանդ:
 Պէտք է, որ շուտով գիտնանք հաստատուն—
 Աղջիկ է արդեօք քո չորբան ընկեր.
 Այսպէս կը փորձենք, լսիր դու արթուն,
 Դէ լաւ բաց արա այդ թմրած աչքեր.
 Ես փըլաւ կեփեմ, մի փըլաւ անուշ,
 Դու տար ու յարձնիր քո կոյս ընկերին.
 Հետը կը խառնեմ մարգարիտ ու նուշ.
 Թէ որ ուտելիս գովածըդ փէրին
 Շուտ-շուտ հաւաքեց սիրուն մարգարիտ
 Ու պահել ուզեց աչքերով ագահ,
 Գիտցիր՝ քո խօսքն է, աղջիկ է ճշգրիտ,
 Թէ չէ մըտատանջ իզուր մի խոկա»:

Եւ Հութութիկ տաք-տաք փըլաւ
 Առաւ թասով պըղընձի,
 Սրտատըրով սարը ելաւ.
 Թող լուսինը նախանձի—
 Գընաց գտաւ ծաղկած վայրի
 Անուշաբոյր թարմ շուշան.
 Խնդան և դու թռչնակ մարի—
 Ահա քո յոյս վարուժան:
 Արբէք կիզիչ սիրով զեղուն,
 Ամենաշինջ, երկնառաք.
 Սիրոյ գրկում մեն մի սողուն
 Ուժ է ստանում անառակ:
 Բայց և անեղր մտորմունքի
 Մանւածապատ մի շարան
 Ծնում է խենթ ցնորմունքի
 Սրտածմլիկ տեսարան:

Փափունկ զեփիւռ պըտոյտ տալիս,
 Շնչում է պաղ, կարեվէր,
 Փակ աչերով ծոր-ծոր լալիս,
 Վիս է հնչում սրտաւեր:
 Սօսափում են դալար մայրիք
 Տերեախիտ վէս կատար.
 «Քո զըրոյցը, անգին մայրիկ,
 Մընացել է անկատար:

Սէրը պատմիր այն ջիւանի,
 Որի հօրը ոտքի տակ
 Ի՞նչ հսկաներ՝ քաջ, անւանի
 Մոխիր դարձան անգիտակ...
 Խըշխըշում են հազար բերան
 Իիւր տերեւներ ոստերի,
 Թեւերը բաց, մայրու վերան,
 Պարուրում են անթերի:

Իսկ սուերում տերեաթափ,
 Սամէլ Հովկին մօտ-մօտիկ,
 Իր ծով սիրով արևատայ,
 Նստել էր նա— Հութութիկ:
 Փորձ էր անում, մի փորձ յիմար
 Մօրը տւած խորհրդով,
 Որ գաղանիքը շուտ իմանար,
 Սիրտը բանար անվրդով—
 Թափէր հրապոյր կոյսի առաջ
 Սիրով զեղուն զեղ փնջեր.
 Քամէր արցունք լալահառաչ
 Եւ փայփայած իր տենչեր:

«Այս ի՞նչ է, չոբան, քո մայրըդ փնթի,
 Օ՛հ, ինչպէս կեղտոտ փըլաւ է եփել.
 Չէ, ես չեմ ուտում, իզուր մի պնդի,
 Վերցնու՛մ էջտեղից, քանի չեմ թափել:
 Փըլաւ է եփել, վեր առ, լաւ նայիր,
 Տես ինչ մեծ քարեր, աւազի կըտոր...
 Ի՛է, արի առողջ ատամներ պահիր,
 Որ այս քարերից չը լինին կոտոր»:

Ու խրոսովկան Սամէլ Հովկիկ
 Շատ բարկացաւ սընամէջ,
 Մարգարիտներն մէկիկ-մէկիկ
 Նա շաղ աւեց հողի մէջ:
 Իսկ Մարջանը կոյսի նազան
 Նըշանի հետ, շատ շուտով,
 Բռնել ուղեց վայրի գազան
 Անկուշտ գայլին իր ճուտով:
 Խառնուեցին այժն ու ոչխար,
 Յըրիւ եկան ամեն կողմ.
 Իսկ շընիկը դեռ խելագար
 Վազ էր տալիս ինչպէս հողմ:
 —Վայ, վայ, Հութութիկ, ի՞նչ պիտի անել,
 Գայլեր են եկել՝ կասես խմբերով.
 Ազատիր մեզ այս փորձանքից անել.
 Այ՛ց քո մուրազին դու հասնես բարով:

Թըռաւ տղան արագավազ,
 Կոյսը՝ ժպտով լի, հարուստ—
 Մարգարիտներն-քարեր աւազ,
 Ժողվեց բոլորն անկորուստ:
 Ապա ինքն էլ նըրա ետքէն
 Սուս հեիհե, շնչասպառ,
 Ծիծաղելով քըթի տակից,
 Հասաւ հօտին ու ժասպառ:
 Չը կան գայլեր, իզուր տանջանք,
 Բայց հօտն ինչո՞ւ սարսափեց.
 Հերիք թափէք արիւն ու ջանք,
 Այն մի դե էր՝ ձեզ խաբեց:

Անցաւ դարձեալ մի նոր գիշեր,
 Բացւեց ժպտուն առաւօտ.
 Երնէ՛կ, այն օր ով շունչ քաշէր,
 Ծծէր թմբիր ծաղկահոտ:
 Հողիդ յակինթ բերեղ մի քար,
 Ի՞նչ գտում էր անաղարա,
 Գոչում էիր՝ ներքե մի գար,
 Թափւիր սրտիս, հէգ սաղարթ.
 Ուզում եմ դեռ ապրել անմեռ,
 Տենչալ ծաղիկ հասակում.
 Այն ցմբա, ամսոտ ձերուկ ձմեռ
 Իմ վարդենին չի գուգում,

Որի թփին սոխակը միշտ
 Կըլկըլում է զայլայլիկ,
 Քաղում է դուրս կասկած ու վիշտ
 Թոյլ սրտերից դասալիք.
 Որի թփին վարդը փըշոտ
 Շղթայելով գեղ-հրապոյր,
 Բացւած կըրծքով, ինչ վավաշոտ,
 Ուղարկում է մեզ համբոյր:

Այդ առաւօտ միայն մէկը
 Խորթ էր մնում դգւանքին,
 Նըրա խորքում փուած մէզը
 Մի պատւար էր հըրճանքին:
 Կածաններով քայլամուր
 Տուն էր գնում նա գունատ,
 Տուն էր գնում ոլոր-մուր
 Տերեւթափ, քընահատ:
 Յոյսի նըշոյլ պէծ-պէծ ցոլում,
 Առկայծում էր մերթ ընդ մերթ.
 Իսկ նա մարմնով բարակ ծորում,
 Շող էր գալիս մահամերձ:

«Վնյ, թող քոռանան աչքերըս անտես,
 Այս ինչ եմ տեսնում, իմ աղիգ բալաս»

Քանի բըբիշով թոյլ սիրտըս քանդես,
 Քնքոյշ իմ մանուկ, սհ, ինչսէ կուլաս:
 Դադար առ վայրկեան, խօսիր շուտափոյթ,
 Ասա, ինչ արիր, իմ պահած հաւիկ,
 Վըկայ թող լինի երկինքը կապոյտ—
 Աղջիկ է որ իսկ կոյս Սամէլ Հովիկ».
 —Մայրիկ դու գիտուն, մայրիկ կաթոգին,
 Ախ, ինչպէս խօսիմ լեզուս կարկամած.
 Ձը գիտեմ՝ ասեմ—տղայ է թէ կին,
 Ուղեղըս վաղուց ննջում է կամաց:
 Երէկ նա յուզեց քանց արծիւ բանդի,
 Թափեց մարգարիտ քարերի նման.
 «Ձե՛՛մ ուտում, ասաւ, իզուր մի՛ պնդի,
 Քարոտ է փըլաւ, կեղտոտ ձեր աման»:
 «Տեսմը, սիրելիս, ես որ քեզ ասի—
 Քո Սամէլ Հովիկ տղայ է չորան.
 Էլ մի՛ մտածի, հօսին դու հասի,
 Դէ, հացը վեր առ ու բռնի ճամփան»:
 —Մայրիկ իմ, մայրիկ, դժւար է, դժւար.
 Ձէ, Սամէլ Հովիկ փէրի է, աղջիկ.
 Այսպէս է խօսում ժհ, սիրտըս շիւար.
 Նա ինձ երազում աւեց մի պաշիկ...
 «Հանգիստ, աչքիս լոյս, լսիր ուշադիր,
 Արցունքն ու կսկիծ գնւր են, աւելորդ»

Փոթորկած հողիդ գսպել աշխատիր,
 կանենք մենք այսօր մի փորձ էլ երկրորդ:
 Նայիր դէպի դուրս, տես, քեզ է կանչում
 Ծիծաղ աչերով կախարդիչ պարտէզ,
 Ուր որ սոխակի երգում ու կանչում
 Զուլում եմ հրպարա, սրլանում անտես:
 Ժպտում են վարդի կոկոններ հազար,
 Շուշանն է բացել ցօղի պէս ամբիժ,
 Մեխակ ու յայսմիկ, ծաղկունք լալագար,
 Բուբում են անանց մայր հողի թումբից:
 Մտիր նըրանց մէջ, հոտոտիր զըւարթ,
 Շնչիր կենսատու անմահ բուրմունքից,
 Քաղկր փնջերով գեղաչեայ ալ-վարդ
 Շարէշար կանգնած երկնաւաք տունկից:
 Վարդերը լցնենք զոյգ-զոյգ ամանում—
 Փաթաթեմ մետաքս, թաւիչ կըտորով,
 Ինչպէս, դու արդէն, շատ ես զարմանում,
 Այն, կիմանանք մենք այս հընարով.
 Դու և Սամէլը նստէք միտսին
 Թարմ-թարմ դարսըւած վարդերի վըրայ.
 Էլ բաց չես թողնիլ կոյս աղջիկ հարսին,
 Թէ շուտ չորացան վարդերը նըրա»:

Երեկոյեան սարի լանջին
 Արածում էր ամբողջ հօտ.
 Ուշիմ, հըլու տիրոջ կանչին,
 Մակաղում էր հովւի մօտ:
 Երկու հովւիկ նստոտեցին
 Ամաններին ծաղկալի.
 Հութութիկը՝ հուր գաղտնածին—
 Տոչորում էր անձկալի:
 Սրտաաբրոփ երբ պիտ բանայ
 Վարդի թասերն վճռական,
 Որ թարմացած ջերմ արբենայ
 Կոյսի պաչով սիրական:
 Բաբախում էր սիրտը ուժգին,
 Լեզու չը կար, որ խօսէր,
 Աչքը յառած նըրա աչքին—
 Ինչպէս կուզէր, որ հօսէր
 Յօղակաթիլ արցունքներով
 Շիթ-շիթ ընկնէր այտերին,
 Իր սառնաթոր պաչիկներով
 Դիպչէր թըշի խայտերին:

Հէզ պատանու տանջանքներին
 Ընկերուհին անմաս չէր.
 Նա էլ կուզէր սիրած եարին,
 Թէ որ այնպէս չամաչէր,

Սիրախորով իր ջիգեարին
 Ամուր սեղմէր, մի պաշէր,
 Զարկէր սրտի նուրբ լարերին,
 Մէկ էլ հնչէր ու հանգչէր...
 Աւանդ, որ նա հեզ, ամօթխած,
 Ներշնչումով բընածին,
 Սէրը գաղտնի, մոռթ, նըլաղած,
 Պիտ չը բանար սիրածին:

Թանձրանում էր մի բոյր ծանօթ,
 Զեղած վարդի աշխարհում,
 Որը անհող, անշուր, անօդ,
 Հեծկըլտում էր ու խամրում:
 Խօսեց սիրտը կոյս աղջըկայ.
 Զգաց նա խուլ հառաչանք.
 «Թառամեցինք... մի ճար չը կայ,
 Քեզ ենք ուղղում աղաչանք.
 Կուչ ենք եկել ամաններում,
 Մեզ պոկեցին սուր ճանկեր.
 Ծաղիկներին օհ, չեն սիրում...
 Քեզ փորձում է քո ընկեր»...

— Թուր Մարջան, կանչեց Սամէլ,
 Բռնիր գայլին հէնց բկից,
 Մի խըրատ տանք այս անգամ էլ,
 Որ գուրս չը գայ իր մաքից:

Ակնթարթում, նըշանի հետ,
 Հաւատարիմ կենդանին,
 Արագ վազքով առաջ ու յետ,
 Բռնել ուղեց գազանին:
 Ինչպէս կայծակ որոտացող
 Պայթեց մի մեծ վայնասուն.
 Յրիւ եկան սրոճացող
 Այծ ու ոչխար անասուն:
 «Հասիր, թուլամորթ, չէս տեսնում արդէն
 Վըտանգ է սպառնում մեր ամբողջ հօտին.
 Թո՛ղ որ գազաններն ոչխարը ջարդեն,
 Իսկ դու մի խըփիր քո մատը մատին:
 Ա՛խ, ինչո՞ւ այսպէս թմրած է ոտըս,
 Կասես փըշերով ծաղկելիս լինին.
 Ինչպէս է մայում անպաշտպան հօտըս,
 Երկիւղ է պատել նըրբանց ամենին»:

Հըլու, պատրաստ մի ալնարկին
 Սիրած իր կոյս ընկերի,
 Նըրա ամեն մի հայեացքին
 Հութութիկը խենթ գերի—
 Փայլակաձև շանթի հարւած
 Քամու թևով սըլացաւ.
 Բայց իր սիրտը մոռթ, վըտարւած,
 Սիրող կոյսից շատ լացաւ:

Դեռ ականջին հնչում էին
 Կրծու խօսքերն վիրաւոր,
 Դէպի կուրծքը թռչում էին
 Սուր-սուր նետեր թունաւոր:
 Ուզեց նա մի խիզախ գործով
 Քաջի անուն վաստակի.
 Պատուի, անցնի ամբողջ մի ծով,
 Լեռ արգելքներ խորտակի,
 Որ պարզերես նա պարծենայ
 Ինչպէս որսկան անւանի—
 Թող Հովիկը լաւ գիտենայ
 Ու կտրիճին հաւանի:
 Ափսոս, գայլը փախաւ ձեռքից.
 Շուտ չը հասաւ, որ բռնէր...
 Ձէր գիմանայ, մրմուռ վէրքից
 Քիչ կը մընար, որ մեռնէր—
 Դեռ անգիտակ խարդաւանքին
 Կեղծ ու պատիր խօսքերի,
 Այդ միամիտ մարդը անգին
 Ձոճ էր Սամէլ ընկերի:
 Ի՞նչ իմանար, որ սրտակից
 Քոյրըն եղբօր կը խաբի—
 Թողմած վարդերն նա իր տակից
 Եղբօր թատում կը թափի...

Տըխուր եկաւ տեղը նախկին.
 Վեր էր կացել և Հովիկ.
 Մտիկ աւաւ նրբա ծաղկին...
 Հանգաւ վերջին կորովիք:
 Թոյլ ձեռքերից նա բաց թողեց
 Ջրւարթ վարդեր անթառամ.
 Անբնիտ գլխիս անձրև մաղեց,
 Թողէք ճշամ, մի գողամ,
 Որ սև բռնի ամբողջ աշխարհ,
 Խաւար դառնայ և արև,
 Մայի տխուր հօտիս ոչխար,
 Տան ինձ վերջին մի բարև:
 Թառամել են թասիս վարդեր,
 Յոլաց աստղը երկնքից,
 Թափւեց սաղարթ— ծառի զարդեր,
 Յամբեց ջուրը ակունքից:
 Ո՞ւմ համար եմ տանջում այսքան,
 Ի՞նչ եմ ապրում կարեւոր...
 Քնիւր խողալ, զարդոտ որսկան,
 Կեանքը փուճ է ու աւեր...

Փոքրիկ լճակ՝ լեռնապսակ
 Ականաւիւռ գազաթին,
 Լացող ուռիք բարձրահասակ
 Ճղնակտառ իր շուրթին,

Մըթուլթեան մէջ խորհրդաւոր
 Աստղերի հոյք, ծիր-կաթին
 Յուլցուում է ջինջ, դարաւոր
 Համեստափայլ ճակատին:
 Մըշուշապատ կէս գիշերին
 Քընաթաթախ աշերով,
 Մինչ անձնատուր իր յուշերին—
 Ալեծածան պաշերով
 Երագախաբ լըճակը լուռ
 Նիրհում է խոր ափերում,
 Այն ժամանակ մի պաղ սարսուռ
 Կոհակների ծափերում
 Շունչ է առնում գիշերածին,
 Դուրս է հանում մի բողոք,
 Խարխափելով՝ ջերմ սիրածին
 Ընդգրկում է անողոք:
 Մութի միջից դանդաղաշարժ,
 Պատկերացաւ մի սոււեր,
 Նա՛ սեւաթոյր, մուսյլ, անշարժ
 Կախ էր զցել զոյգ թևեր:
 Սէւ էր բուրում նըրա հագին,
 Քանց գիշերը նա սեակ.
 Մոլթ էր առել մարդու հոգին,
 Դաժան կեանքի խորթ զաւակ:
 Կուտակ-կուտակ խոհեր, կսկիծ
 Արմատ բռնած խորամուխ,

Թանչում էին ժայռոտ կըրծքից
 Ամպազընաց թանձրը մուխ:
 Մեխւեց ափին խորաթափանց,
 Սոսկաց ջուրը մահակոչ
 Եւ ուռենիքն այն վեհապանծ
 Մի ողբ ասին անաղոչ.
 «Կա՛ր մի ժամանակ, երբ այս լըճակում
 Կարապն էր հնչում երգերը ցնցուղ
 Եւ մեր ճիւղերից սարեակը ճրկում,
 Երբ ոստիկներին բացոււմ էր ընձիւղ:
 Օ՛հ, այդ վեհաշուք, ախորժ օրերին
 Լուսնեակի շողքով իջած մեր տակին
 Մանկամարդ կանայք, ջըրերի փէրին,
 Պար էին խմբում առոյգ, խնդազին:
 Եւ մենք բախտաւոր՝ ինչ երանաւէտ
 Հով էինք սփռում նըրանց երեսին.
 Աւաղ, որ նըրանք շնւտ կորան յաւէտ,
 Մեղ բաժին տալով պատրանքները սին:
 Այն շնւք լուսաշաղ օրից մինչ այսօր
 Միայն սուլում է վայնասուռն քամին.
 Իսկ մենք նըրա դէմ յուսահատ, անդօր—
 Վայ՛ում, լալիս ենք գիշերուայ ժամին:
 Փախիր դու անհետ, անգոլթ, անհոգի
 Նոր-նոր յուշերով մեզ մի վրդովիր.
 Անէ՛ծք քո ճամփին, նենգամիրտ ոգի,
 Բոցավառ հրդեհ-սիրով դու այրւիր»...

Ու գիշերւայ այդ խօյ մութին
Մի ճիշ հնչեց գիւ, մրուունչ...
Սուերը այն դաժան մըթին,
Ա՛հ, կիսախեղդ, անտէրունչ,
Փախաւ լճից գերծ, մտայոյզ
Արհաւրալից իր ճամփին.—
Մահ էր փնտուում այնտեղ, անյոյս,
Ուռիաշար ջրրափին...

«Թախկ-թախկ, թախկ-թախկ լուսամուտին,
Երախի մէջ սե՛, խօլական
Կէս գիշերւայ թանձր մութին
Թախում էր մի ուրեական:
Մահ էր թափուում նըրա վրայից
Դաժան, խաւար քանց գիշեր.
Կրմախք հոգու մըռայլ անից
Սարսոււմ էին սե յուշեր—
Մարմնաւորւած՝ վամպիր չղջիկ,
Շըջում էին սըրաթե,
Յափշտակում Մութի աղջիկ,
Տանջում անյագ, յարատե:
Ճիրաններում—սուր, գիշատիչ—
Կոյսն էր մարում մահամերծ,
Աղէկատուր վերջին մի ճիշ
Ղօղանջում էր մահագերծ:

Եւ դարկահար ոգին անքուն
Կուչ էր գալիս դողալով,
Հարւածում էր պող ապակուն,
Հեկեկում էր նա լալով:

«Բնց դուռը, մայրիկ, գաւակդ է կանչում,
Գիշերն է պատել հոգիս անմեկին,
Շուրջս շար ոգիք վխտում են, թանչում,
Խեղդում չարախինդ թանձրամած մէգին»:

Ո՛հ, բարախեց վայրկենաբար
Սիրող սիրար մայրական.
Պատուց մութից իր ճանապարհ,
Տեսաւ... որդուն ուրեական—
Փըշաքաղեց ամբողջ մարմնով,
Սարսուռ պատեց կըտրատող.
Եւ աչքերը լցւած արնով,
Դուրս ցայտեցին փարատող
Աղի-աղի դառն արտասուք
Թունաշաղախ շիթերով,
Վայր հոսեցին արգէն անշուք
Նըրա խամրած այտերով:
«Գրկիր ինձ ծնող, գրկիր գաւակիդ.
Շունչ տուր կենսատու, մի շունչ, մի կըրակ,
Որ կենդանանամ մայրական կըրծքիդ,
Ուռճանամ ուժով, ջերմանամ արագ:
Երկինքը պայթեց իմ գլխուս վերե,
Խաւարը հոսեց իր ցնւրտ ամպերով.

Յաւիտեան մի՞նեց վառ կեանքիս արև,
 Շըշընջաց աղօտ մի վերջին բարով:
 Վարդերը թօշնան միայն իմ թասում,
 Դաւնէկ, զեղնահար ժպտացին նըրանք.
 —Անմիտ պատանի, ինչ ես սպասում,
 Հըրատապ, գաղանի քո սիրուց խամբանք:
 Աչերըս պատեց խելառ մառախուղ.
 Մըշուշը փաթթեց իմ միտքը պայծառ.
 Կըրծքումըս բացւեց խորավիհ հրաբուխ.
 Մահի տենչերով մարեցայ անծայր...
 Եւ ան սոսկալի... մի հզօր վայրկեան
 Ես քեզ յիշեցի, սն, անգին մայրիկ.
 Գիտե՞ս թէ քեզի սիրում եմ որքան,
 Դու կեանքիս հատոր, մայրիկ իմ քաղցրիկ):
 —Հանգչիր գրկիս մէջ, սիրասուն բալիկ,
 Դու իմ ծերութեան միակ ապաւէն.
 Սևով մի պատիր օրերըս գալիք.
 Քանգիր ծածանւող մահու ժապաւէն:
 Դու չես բոլորել զեռ քսան գարուն,
 Ծաղիկ հասակիդ վարդերն են փթթում,
 Քո երակներում խաղում է արիւն,
 Կենսուբախ կեանքի արևդ է խնդում—
 Նոր-նոր բաց արած թևերը շող-շող
 Հրապոյր քաղցրութեամբ սէր է ցոլցուում,
 Իսկ դու, անձնատուր խոհերիդ մաշող,
 Մեղրահոս կեանքիդ հիւթերն են ծորում:
 Գիտե՞մ ես քանի գեղաշեայ կոյսեր—

Հուանեակից չքնաղ, արևից ժպտուն,
 Երկնքից իջած հըրեղէն լոյսեր,
 Աշխարհ-եղեմի չինար հաստատուն.
 Մազերը փուլած փունջ-փունջ հիւսերով,
 Շամամ ծծերի կուրծքերը հպնրտ,
 Ձեռքերըդ հասնեն նըրանց ուսերով.
 Ունքերը խաս-խաս աբրէշում բարդ-բարդ,
 Մասները ձիւնեայ, մարմինը մարմար,
 Թըշերը վարդի կոկոններ անբաց.
 Նըրանք խելագար այրում քեզ համար,
 Քո ջահէլ-ջիւան տեսքով են արբած:
 Զոկենք նըրանցից մէկին հարանացու,
 Կապենք վըգերիդ պըսակի նարօտ,
 Ի՛մ էլ վշտացած կեանքըս քաղցրացու,
 Առնե՞մ ես սիրոյս անբապա կարօտ:
 «Ձէ, չէ, մայրիկ ջան, այդպէս մի խօսիր,
 Առանց Հովիկի ապրել չե՞մ կարող...
 Թէ ինձ սիրում ես՝ օգնութեան հասիր,
 Փակիր խորխորատ վիհը խանգարող.
 Մօտեցուր իրար սրտերը ջահիլ,
 Գատուիր Մամէլից քողը մըշուշի,
 Որ մարդ թէ գազան մեզ մընան մայիլ
 Եւ ամբողջ աշխարհ մեր սէրը յիշի:
 Նըրա փոթորկող ժպիտն անուշիկ
 Մեխուել է հոգուս ծալքերում ուժգին.
 Նա իմ զիցունին, իմ կեանքն է նուշիկ.
 Գերի եմ նըրա մտքին և ուշքին:

Յիշու՛մ եմ... այն օր դարձայ նրբա մօտ.
 Լողանում էր նա ջրվեժի տակին.
 Հէնց որ ինձ տեսաւ՝ դգաց մի ամօթ,
 Դուրս թրուաւ ջրբից... շորերը հագին
 Իմ դէմս ելաւ, բայց որ տեսնէիր,
 Խեղքըդ կը գընար. չուտել չըխմել,
 Դըրան օրերով նայել կուզէիր.
 Թէ որ աղջիկ է՝ մարմինը քամել
 Ծոր-ծոր հալուճքով քո կըրձքի վըրայ.
 Ծունչ տայ, շունչ առնել կոյսի երակից,
 Ծըծել հրապոյրը, թովչանքը նըրայ,
 Ապա թէ խանձել արև-կըրակից»...
 —Լսիր Հուժուժիկ, այդ ի՛նչ ես ասում,
 Հովիկը փախաւ ջրվեժի տակից...
 Մտքովըս մի նոր կասկած է վագում...
 Ահա ի՛նչ կասի մայրըդ սրտակից.
 Ձէ, այդ Հովիկը աղջիկ է որ կայ,
 Թէ ոչ ընկերից նա չէր ամաչի.
 Եթէ սուտ լինի, հոգիս է վըկայ,
 Թող մեր պարտէզը էլ չը կանաչի:
 Այժմ՝ դու զգո՛յ՛ր եղիր հետամուտ,
 Որ կոյսը բընաւ քեզ չը նըկատի.
 Երբ լոյս երեկոն հագնի շըղարշ մութ,
 Մըշուշը մեղմիկ սար ու ձոր պատի.
 Հովիկը քեզնից հեռանայ թաքուն,
 Ջրվեժը առնի արծաթեայ ուսով—
 Անշըշուկ, անձայն, հետևիր իսկոյն.

Այնտեղ կը մընաք միայն երկուսով:
 Կը ցայտի փրփուր ջրվեժի վըշտոց,
 Վըտակը կերթայ զւարթ, կարկաջուն—
 Բամուց կը հնչի անտառի խըշտոց,
 Ասողերն կը նայեն երկնից պաղպաղջիւն—
 Աղջիկը հոգով ձուլւած բոլորին,
 Ապահով կըզգայ վեհ, խորհըրդաւոր
 Բընութեան գրկում լըռին գիշերին,
 Ինչպէս ջրբերի հուրի մենաւոր.
 Անձնատուր եղած մերկանդամ մարմնով
 Պաշոյ խաղերին, խըլոյ կուսութիւն,
 Նըրանց զուգորդւած իր տաք արիւնով,
 Հեռու կը վանի ճնշոյ հեզութիւն.—
 Ազատ ծփալու վայրի շիթերով,
 Կարօտը առնի այրոյ արբունքի,
 Պաշերը տեղան նըրա այտերով—
 Չուգեն վարդերը վառուոյ գարունքի,
 Կուրձքը զոյգ խնձոր՝ հասնելու մօտիկ,
 Դէմ տայ համարձակ անգօր հարւածին,
 Թըրթըռան վէտ-վէտ մարմին ու տառիկ
 Եւ նա ըզմայլած ծիծղայ գաղանածին—
 Հասիր եղնիկի թեթև ոստիւնով,
 Ծորերը խըլիք աւազոտ ափից.
 Եւ բազուկներիդ առողջ թնդիւնով
 Սեղմիր քո կըրձքին Հովիկին ամբիծ:
 Ինչպէս երկընքից սըլացոյ ուրուն
 Ճանկում է որսը գիշատիչ, ազահ—

Պաշերըդ մեխիր կոյսի շուրթերուն,
 Թող որ նա մի պահ ճըչայ ու սըգայ,
 Ապա հէնց ինքը գառան հեղութեամբ
 Քնքուշ կը նայի կըրակ աշերիդ,
 Ուշաթափ եղած՝ ծորող քաղցրութեամբ
 Արձագանք կը տայ մեղրոտ պաշերիդ:
 Այնժամ քո սէրը շըշընջայ նըրան,
 Բորբոքիր հուրը կուսական սրտում,
 Թափիր բերանում հատիկներ նըռան,
 Համբոյրներ տեղայ աշերին տրտում.
 Քաղիւր նըրանից խոստումը սիրոյ—
 Անբաժան ապրել մինչև գերեզման.
 Առանց սիրելու կեանքը մի գերօ—
 Պատրանք է ունայն, դատարկ անսահման:
 Եւ երբ նա կասի իր խօսքը վերջին.
 Վըզովըդ կընկնի իր սուրբ երգումով—
 Սիրել անթառամ իր ջիւան քաջին,
 Ազատիր նըրան փարթամ խնդումով...
 Էլ մի բորբոքիր հողիդ մահապատ,
 Կըրձքիցըդ թափիր Սև-Մահի տենչանք.
 Թող կամքըդ գառնայ ամբապինդ երկաթ,
 Կորովի թափով խեղզիւր քո տանջանք:



Օրերն անհեռ գնում-գալիս,
 Ամիսներ են բոլորում.
 Մուրատ չայը փրփուր տալիս,
 Ափերի մէջ գալարում,
 Ժեռ քարափից նա գահավէժ
 Խորտակում է ճըչալով,
 Անդընդախոր ձորում վիշ-վէշ,
 Սուգ է անում շըչալով:
 Դարեր գալիս, դարեր գնում,
 Նա, անսասան, անփոփոխ,
 Իր հարազատ աւազանում,
 Յորձանքներով խուսափող,
 Քերում է քար, աւազ ափեր,
 Վազ է տալիս արնախում,
 Բայց մոլեգին կոհակ ծափեր
 Հսկայ ծովի երախում
 Կուլ են գնում անյիշատակ
 Խառնուրդի մէջ այլատարբ.
 Յատակն էլ լուռ, ջրբերի տակ,
 Մերթ մնչում է ցաւագար:

Վերև անհուն եթեր կապոյտ,
 Ներքև ջուրն էր խըշխըշում.
 Ջրբի ափին ծաղկունք պոյտ-պոյտ
 Եւ մի աղջիկ մըշուշում

Մօտենում էր դանդաղ բայլով
Եղերքներին սրգաւոր.

Բակ բոլորած, ազօտ փայլով
Դուրս էր հանում մենաւոր,
Ամպի տակից, լրիւ լուսին
Արծաթագօծ իր շողեր,
Որ ակնապիշ սիրուն կոյսին
Խելքից հանէր ու շողէր...

Հովիկ ձուլւած իր յուշերին,
Նստեց ափին հինաւուրց,
Ուր ալիքներն ուշ գիշերին
Ծեծում էին ժայռի կուրծ. —
Փրշրբելով, կրտոր-կրտոր,
Անզրդգւելի ժեռ կուրծին,
Կաթիլներով արտասւաթոր
Ցայտում էին մահածին:
Մտածմունքներն թևեր առած,
Տեսիլքներով անուրջում,
Ճախրում էին հողմահալած,
Կոյսն էլ երգ էր մըրմընջում.

«Ձրմեռ է պառում
Հասակըս դարուն,
Ծորում է, կաթում
Սրաիցըս արուն:
Յոյսերըս քնքոյշ
Ձրքացան անդարծ.

Սիրոյ տեղ մի դոյժ
Լըսեցի յանկարծ...
Տենչավառ սրտից
Սիրավառ կըրակ,
Ռհ, դաժան ցրտից
Ցնդում է արագ:
Կիրքը անարատ,
Քանց երկինք լազուր,
Բորբոքեց առատ,
Ախ, ինչպէս իզուր...
Հայրըս ծերունի
Թոյլ սիրտն է մաշում,
Նա իր սիրունի
Կարօտն է քաշում:
Իսկ ես ե՞՞թ տարի
Հովւի շոր հագած,
Աւանդ, օտարի
Դրճներն եմ ընկած:
Ծընոյղ ու քոյրեր,
Օրորոց, մահիճ,
Մանկութեան օրեր —
Մոռացայ անխիղճ:
Քեզ մօտ եմ ձգտում,
Հայրենի երկիր,
Ցաւագար, արտում
Ձաւակիդ գրկիր...»:

Սաւերախիտ կաղնու տակ հով
 Շընկընկում էր պաղ քամին.
 Օրւայ տօթին, անուշ նիրհով,
 Հանգչում էր հէգ պատանին:
 Փէրիները կազմած շրջան
 Եթերային երազում,
 «Ննջիր խաղաղ Հութութիկ ջան»...
 Հովհարում են ու ասում.
 «Այսօր, անշուշտ, դու կը տեսնես
 Բացւած կուրծքը քո եարի.
 Եարիդ կըքով պինդ կը սեղմես,
 Նա էլ քեզ հետ կը մարի»...
 Շընկընկում էր զեփուռ քամին
 Շընչում էր զով, անուշ հով,
 Երազներում հէգ պատանին
 Մըրմընջում էր խոր նիրհով:

Սարի լանջով հէնց այդ պահուն
 Բարձրանում էր մի սղջիկ,
 Բարձրանում էր... որքան խոհուն
 Թռչում էին... զոյգ աչիկ:
 Հեռանում էր գաղտագողի
 Հովիւի վառ երազին...
 Ա՛խ, էլ ինչպէ՞ս իր աշուղի
 Սիրտը հասնէր մուրազին —
 Երբ փախչում էր ինքը անհաս...
 Եւ չէր ուզում՝ դառնասէր

Մի վերջին էլ «բարով մընաս»
 Սիրած արդին գէթ ասէր...
 Այնուհետև չօքան ընկեր
 Թող որ ընկնէր սար ու գաշա,
 Սիրտը արնոտ թող մոմօքէր —
 Նայէր կեանքին իր անհաշտ:
 Բայց չէ... նըրանք տարիներով
 Ճաշակել են ազ ու հաց...
 Առաւ սըրինգ՝ նոր յոյգերով
 Ձայներ հնչեց սրտաբաց:

«Օ՛, մընաք բարով, սարեր Բինգեօլի,
 Սիրավառ կեանքիս որրան ցանկալի.
 Քանի տարիներ, ծաղկաբոյր գարուն,
 Շընչել եմ անյագ լանջերիդ սիրուն:
 Կանաչ ու ծաղիկ, դուք բարով մընաք,
 Ձեզ մօտ եմ թողնում անցեալըս մենակ...
 Եւ դնւ մենաւոր կուսական անտառ —
 Երբ քեզ տեսնելիս սիրտըս կը թնդար:
 Ժայռեր ու քարափ, ամեհի սև ձոր,
 Դնւք էլ էք լըսել երգըս քաղցրածօր:
 Գետակ կարկաշուն, անմոռաց ջրվէժ,
 Թափւեցէք հողուս ձայներով վիշ-վէշ»:

... Լըռեց գետակ, կանգնեց ջրվէժ,
 Էլ չի թափուում գահավէժ,
 Սիրանըէր Բինգեօլ եղեմ
 Էլ չի ժպտում խնդաղէմ:

Հեկեկացին ժայռեր ու քար,
 Դողդոջ մարմնով խելագար,
 Խորշումածածկ, խաւարչըտին,
 Ամպեր զուգած ճակատին:
 Սկը փաթթեց ջինջ սարալանջ,
 Ծանրը տնքաց ցաւատանջ.
 Սարսուռ անցաւ ամբողջ մարմնով,
 Հողը ներկէց արիւնով:
 Հսկայակտն կանաչ անտառ,
 Մերկանալով դեղնահար,
 Վայր խոնարհեց արիւնակաթ
 Սօսիների վէս գազաթ:
 Քար են կտրել մինչև հիմի
 Գազանները ամենի -
 Քար աչքերից արտասուքի
 Շիթ է ցայտում կրկնակի:
 Թռչունները, երամ-երամ,
 Ծաղիկներում անթառամ,
 Ճրթճրթում են օտարոտի,
 Մնլուր երգեր կարօտի:
 Ու մըզկըտաց աղէկըտուր
 Հօտը—ամպից սեւթոյր—
 Հովկի սիրուն գուրգուրալով
 Ձորը թափէց սուրալով:
 Միայն... հովիւ խորունկ նընջում,
 Մըրմընջում էր անուրջում—

Իր սիրունին, ժպտուն աչով,
 Անց էր կենում առաջով...

Հնչեց նորից սիրատոչոր
 Երգը յուզիչ հարւածով...
 Արտասուեցին ժայռերը չոր,
 Փրփուր առաւ արնածով...

«Եւ դո՛ւ Հութութիկ, դէ՛հ, բարձր մընաս,
 Հողուս գաղտնիքը այժմ կիմանաս.—
 Ծընող ու քոյրեր մոռցայ քո սիրուն,
 Քեզ հետ անցուցի եօթ սիրոյ գարուն:
 Մոռացայ նամուս հասած աղջըկայ,
 Խըղճիս խայթի դէմ դարձայ անըզգայ...
 Ուզեցի շնչեմ քո կըրծքի հըրով—
 Անգնթ սիրական... օհ, մընաս բարով:
 Ինչպէ՞ս էլ ապրեմ քեզ հետ անբաժան—
 Սէրըս չիմացար, մանուկ անարժան:
 Լըսում էք, ջըրեր, կացէք, մի փախչէք,
 Ասէք չորանին—տըղձի եմ՝ աղջիկ:
 Լըճակի ծոցում կարնպ լողացող,
 Պատմիր աղջըկայ սիրաը մըխացող:
 Զըվէժ դու վայրի, պաշող անհոգի,
 Խօսիր կըրքերը այրող արբունքի...
 Փնւ եկ, վիթխարի Սերմանց դու կատար,
 Խեղդիր անխընայ ուխտըս անկատար...
 Այժմ ես կերթամ, կերթամ լալագին,

Թողնելով քեզ մօտ սիրտըս անմեկին,
 Սիրտըս հըրավառ, սիրոյ աղջրկայ,
 Որի նըմանը, ան, քեզ մօտ չըկայ...
 Բայց դու... խըլեցիր, առար իմ անդորր...
 Եւ վերջին բարով... կեանքիս դու հատոր»:

Հովւի գլխին, կարծես յանկարծ,
 Պայթեց ինչ որ մի թնդիւն.—
 Նա, շանթահար, էլ ուր անդարձ
 Կոյսին ման գար ապարդիւն:
 — Հէյ, թոյլ որսկան, կաց ամօթով,
 Մարին փախաւ քո ձեռքից...
 «Անսիրտ բազէ, ճանկիր շուտով
 Վայր բեր որսըս երկընքից»:
 — Ձէ, չէ, ջիւան, դուր մի փնտուր,
 Մարին փախաւ սարից ցած.
 Քանջ ես՝ սարի կուրծքը պատուիր,
 Ճանկիր որսըդ հեռացած:
 «Անգութ սարեր, քաշէք հեռու,
 Երթամ, հասնեմ իմ եարին:
 — Անտառի մէջ, յիմար ուրու,
 էլ չես գտնիլ քո եարին:
 Պայթեց ամպրոպ. լուեց յանկարծ
 Արհաւրալից նոր թնդիւն.
 — Ի՞նչ ես, չորան, անվերադարձ
 Աղջիկ փրնտուում ապարդիւն...

* * *

Գառնաշունչ, յուր տարիներ անցան,
 Երկար տարիներ սեւթոյր կեանքի...
 Եւ դառն օրերի ինչպէս յուշարձան—
 Սաւերն է շրջում անուր զրկանքի:
 Նըրա որոնող աչերից մահու
 Անէծք է թափուում ծանրութեամբ կապար.
 Անէծքների հետ սուլում են «վա-հո՛ւ...»
 Անհոգ քամիներ ձայնով ծաղրաբար:
 Հողմավար սաւեր հողին խելագար
 Վազում է մութին քամուց էլ թեթև.
 Նա պատրանքների սին մտքով տըկար
 Ճանկել է ուզում իր որսը անթև:
 ... Ահա՛ խանդավառ, նա զոյգ բազուկով
 Պէտք է տիրանայ նագելուն անմահ...
 Բայց... աներևոյթ լոյսի թըրիչըով
 Տնդում է փէրին... այդպէս մինչ հիմա:
 Եւ անգոր հողին, քամուց շըրջուրիկ,
 Գաղանի՛ մենաւոր վայրերն է դիմում.
 Անգութ պայքարում եղած դասալիք—
 Լեռնացած վըշտի մըրուրն է քամում:
 Նըրան տեսնելիս սարերն որբացած
 Նըզովք են կարգում՝ անգութ, թունալից...
 — Ա՛խ, չքնաղ փէրին, ինչո՞ւ, անիծած,
 Այն հնչուն տարին փախաւ մեզանից:

Գետակն էլ նորից կանչում է «վիշ-վէշ»...
 Կորաւ սիրունիս — չընաշխարհիկ կոյս —
 Ընկիր քարափից անդունդ զահավէժ,
 Ատելի՛ր դու մարդ, վշտահար հոգոյս:
 Լալիս են, գոչում ծաղկունք լալազար,
 Քարերն են հոսում արցունքի հեղեղ.
 -- Գընաց կոյս Սամէլ, սհ, անէ՛ծք հազար...
 Դըժոխքն է քամել մեր ցաւըն անեղ:
 Ողբում է մայրին ծանրը արնքոցով,
 Ամպեր են հոսում թուխպ-թուխպ մթազգած.
 — Անտանը միայն միշտ լաց ու կոծով
 Սիրուն աղջրկան կորուսար սգաց:

Սուլում է քամին չարամիտ «վն-հնւ»...
 Հնչում ահանջին անհոգ, ծաղրաբար —
 Եւ հոգու պղտոր աչերից մահու.
 Անէ՛ծք է թափւում՝ ծանրութեամբ կապար:
 Օ, դո՛ւք, խաբուսիկ տեսիլք աչերի,
 Ահարկու կեանքի յիշատակ նոր-նոր,
 Անպատում վշտի երգը սոսկալի
 Հնչէք սընարին վերջին ամանոր:



« Ազգային գրադարան »



NL0352160

37911